ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 մայիսի 2024 թվականի N 763 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի N 405-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի «Քաղաքացու առողջական վիճակի հետազոտման և բժշկական փորձաքննության, հետազոտման և փորձաքննության ուղեգրման կարգերը, հետազոտում և բժշկական փորձաքննություն իրականացնող մարմինները և դրանց գործունեության կարգը, փորձաքննության եզրակացությունների ձևերը, բժշկական հետազոտությունների և բժշկական հաստատությունների ցանկերը, իրականացված ծառայությունների դիմաց փոխհատուցման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 405-Ն որոշման մեջ (այսուհետ՝ որոշում) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված N 1 հավելվածում՝

ա. 1-ին կետում «(18-27 (35), իսկ օրենքով սահմանված դեպքում՝ նաև մինչև 28 տարեկան (այսուհետ՝ զորակոչային)՝ ներառյալ պարտադիր զինվորական ծառայությունից առողջական վիճակի պատճառով վաղաժամկետ զորացրված և 27 (35) տարին չլրացած), 27 տարեկանից բարձր տարիք ունեցող և զինվորական ծառայություն չանցած,» բառերը փոխարինել «(18-27 (35), իսկ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքով (այսուհետ՝ օրենքով) սահմանված դեպքերում՝ նաև մինչև 28 տարեկան կամ պարտադիր զինվորական ծառայությունից առողջական վիճակի պատճառով վաղաժամկետ զորացրված և 27 (35) տարին չլրացած կամ օրենքի 19-րդ հոդվածի 1.1-ին մասում նշված և 37 տարին չլրացած (այսուհետ՝ զորակոչային) կամ 27 տարեկանից բարձր տարիք ունեցող և զինվորական ծառայություն չանցած՝ ներառյալ օրենքի 19-րդ հոդվածի 1.2-րդ մասում նշված,» բառերով,

բ. 4-րդ կետում «ՌԲՎ՝ ռազմաբժշկական վարչություն» բառերը փոխարինել «ՌԲԱՎ՝ ռազմաբժշկական ապահովման վարչություն» բառերով,

գ. 5-րդ կետի առաջին պարբերությունում «սեռի» բառից հետո լրացնել «կամ օրենքի 19-րդ հոդվածի 1.1-ին մասում նշված» բառերով, իսկ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» բառերը հանել,

դ. 5-րդ կետի չորրորդ պարբերությունում «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» բառերը փոխարինել «ներառյալ օրենքի 19-րդ հոդվածի 1.2-րդ մասում նշված, կամ» բառերով, իսկ «նույն» բառը հանել,

ե. 18-րդ կետից հանել «կամ դատական կարգով» բառերը,

զ. 19-րդ, 73-րդ, 77-րդ, 78-րդ, 88-րդ կետերում «ՀՀ ՋՈՒ-ի ռազմաբժշկական վարչության» բառերը փոխարինել «ՌԲԱՎ» հապավումով,

է. 21-րդ, 22-րդ և 76-րդ կետերում «ՀՀ ՋՈՒ ՌԲՎ» հապավումները փոխարինել «ՌԲԱՎ» հապավումով,

ը. 23-րդ կետում «փետրվարի 5-ը» բառերը փոխարինել «փետրվարի 10-ը» բառերով,

թ. 26-րդ կետը «հետազոտությունները» բառից հետո լրացնել «, որից հետո յուրաքանչյուր բժիշկ-մասնագետի կողմից լրացվում է էլեկտրոնային առողջապահության ԱՐՄԵԴ համակարգում սահմանված ձևի զննության թերթիկը» բառերով,

ժ. 52-րդ կետի երրորդ պարբերությունը «ենթարկած» բառից հետո լրացնել «և տարկետում տրամադրած» բառերով,

ժա. 60-րդ կետի առաջին նախադասությունը «24» թվից հետո լրացնել «(օրենքի 19-րդ հոդվածի 1.1-ին մասում նշված անձանց դեպքում՝ 34)» բառերով, իսկ «(35) տարին» բառերից հետո լրացնել «(օրենքի 19-րդ հոդվածի 1.1-ին մասում նշված անձանց դեպքում՝ 37)» բառերով,

ժբ. 62-րդ կետից հանել «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» բառերը,

ժգ. 71-րդ կետի առաջին նախադասությունում «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի» բառերը փոխարինել «Օրենքի» բառով, «ազատված և պահեստազորում հաշվառված» բառերից հետո լրացնել «(օրենքի 19-րդ հոդվածի 1.1-ին մասում նշված անձանց դեպքում՝ մինչև 37 տարեկանը լրանալը)» բառերով, «նույն» բառը հանել, իսկ «28 տարեկանը» բառերից հետո լրացնել «(օրենքի 19-րդ հոդվածի 1.2-րդ մասում նշված անձանց դեպքում՝ մինչև 37 (45) տարեկանը)» բառերով,

ժդ. 71-րդ կետի երրորդ նախադասությունում «Մինչև 27 (35) կամ օրենքով սահմանված դեպքում՝ նաև մինչև 28 տարեկանը լրանալը ռազմաբժշկական» բառերը փոխարինել «Ռազմաբժշկական» բառով, իսկ «զինապարտները» բառից առաջ լրացնել «սույն կետում նշված» բառերով,

ժե. 72-րդ կետի 1-ին ենթակետից հանել «զինվորական հոսպիտալի կամ առանձին բժշկական ջոկատի» բառերը,

ժզ. 11-րդ գլխի վերնագրից հանել «ՀՈՍՊԻՏԱԼԻ ԿԱՄ ԱՌԱՆՁԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՋՈԿԱՏԻ» բառերը,

ժէ. 73-րդ կետի առաջին նախադասությունում «Հոսպիտալի կամ առանձին բժշկական ջոկատի հոսպիտալային» բառերը փոխարինել «Հոսպիտալային» բառով,

ժը. 94-րդ կետի երկրորդ նախադասությունից հանել «եզրակացություն» բառը.

2) որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով սահմանված N 2 հավելվածի՝

ա. 1-ին գլխի 2-րդ կետը «սեռի» բառից հետո լրացնել «կամ օրենքի 19-րդ հոդվածի 1.1-ին մասում նշված,» բառերով, իսկ «27 (35)» թվերից հետո լրացնել «կամ օրենքի 19-րդ հոդվածի 1.2-րդ մասում նշված՝ 37 (45)» բառերով,

բ. 5-րդ գլխի 1-ին կետի 6-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6) «Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ»,

գ. 5-րդ գլխի 1-ին կետի 46-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 46.1-ին ենթակետով.

«46.1) «Վայոց ձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ».

3) որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետով սահմանված N 3 հավելվածի 1-ին կետը «սեռի» բառից հետո լրացնել «կամ օրենքի 19-րդ հոդվածի 1.1-ին մասում նշված,» բառերով, իսկ «27 (35)» թվերից հետո լրացնել «կամ օրենքի 19-րդ հոդվածի 1.2-րդ մասում նշված՝ 37 (45)» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

24.05.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ